

ԱՐՑԱԽՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ
ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարությունյան Մ. («Կաճառ» գիտական կենտրոն, ԼՂՀ)

kachar.gk.shushi@mail.ru

Բանալի բառեր՝ բանակ, անվտանգություն, ագրեսիա, ինքնապաշտպանություն, նորագույն պատմություն, անցյալի վերաիմաստավորում:

Ռազմական շինարարությունը յուրաքանչյուր պետության անվտանգության կարևոր բաղադրիչն է: Այն պետական համակարգում առավել ծանրակշիռ է դառնում արտաքին ագրեսիային դիմագրավելու պայմաններում: Արցախում ռազմական շինարարության առանձնահատկությունն այն էր, որ պետականակերտման գործընթացը զուգորդվում էր հակառակորդի ռազմական ագրեսիային դիմագրավելու հրատապ գործողությունների ու միջոցառումների հետ, որոնցից ամենապահանջվածը, բնականաբար, բանակաշինությունն էր:

Մեր նպատակն է անդրադառնալ Արցախում 1991-2006 թթ. բանակաշինության պատմագրության մի քանի հիմնահարցերի, ինչը պայմանավորված է մեր ոչ հեռավոր անցյալի կարևոր իրադարձությունները հավաստի ներկայացնելու և վերաիմաստավորելու անհրաժեշտությամբ: Թեմայի արդիականությունը բխում է Արցախում հայկական պետականության կերտման կարևորագույն ոլորտներից մեկի՝ ռազմական շինարարության՝ սաղմնավորվող պատմագրության առաջնահերթությունների ու նպատակների հստակեցման անհրաժեշտությունից, ինչը կարող է խթանել նոր ուսումնասիրություններին ու թեմատիկ հետազոտություններին,

ինչպես նաև դրանց արդյունքների հրատարակմանը (այդ թվում՝ օտար լեզուներով) և գիտական շրջանառությանը՝ դրանով իսկ նպաստելով ԼՂՀ միջազգային ճանաչման, Ադրբեջանի հետ հակամարտության վերաբերյալ օբյեկտիվ հասարակական կարծիք ձևավորելու գործընթացներին:

Թեմայի նորույթը գիտական հարցադրման, ինչպես նաև մի շարք մոտեցումների վերանայման ու փաստերի ճշգրտման մեջ է: Դրանք կատարվել են բազմամյա հետազոտությունների արդյունքների հիման վրա:

Հարկ է նշել, որ ԼՂՀ-ում բանակաշինության գործընթացի առանձին հարցերի անդրադաձել են Արցախյան շարժմանը և պատերազմին նվիրված գրքերի ու տարաբնույթ աշխատանքների հեղինակները: Ի տարբերություն 1991-1994 թթ., հրադադարին հաջորդած տարիների բանակաշինության գործընթացն արտացոլված է առանձին հրապարակումներում և կարոտ է գիտական ընդհանրացված ուսումնասիրության:

Արցախում ռազմական շինարարության պատմագրության հիմնահարցերից կարելի է առանձնացնել պետականության խորհրդանիշերից մեկի՝ Պաշտպանության բանակի ստեղծման և իրավապես ու փաստացի կերպով կազմավորման պարբերացումը, ԼՂՀ անվտանգության ու տարածքային ամբողջականության ապահովման գործում Պաշտպանության բանակի դերի արժևորումը, հայ ռազմարվեստը նկատելիորեն հարստացրած ռազմագործողությունների փորձի, ՊԲ մարտական ուղու ընդհանրացումը և վերաիմաստավորումը, ինչպես նաև այդ ու հարակից հարցերի լուսաբանման գիտական մեթոդների ու սկզբունքների ճիշտ ընտրությունը:

Այդ հիմնահարցերի՝ գիտական հանրության համար ընդունելի լուծումների առաջադրումն անհրաժեշտ հիմքեր կարող է ստեղծել

հետագա անաչառ ուսումնասիրությունների և ներկայումս
շրջանառվող մի շարք տեսակետների ժամանակին վերանայման
համար:

ABOUT SOME PROBLEMS OF THE HISTORIOGRAPHY OF MILITARY
CONSTRUCTION IN ARTSAKH

Harutyunyan M. (“Kachar” Scientific Centre, Nagorno Karabakh Republic)